DOI:10.56653/18290361-2024.14-76

Անահիտ Մուշեղյան

anahitm29@gmail.com

ԱՆԻԻ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐԱՄԱԳԵՏ ԽԱՉԱՏՈՒՐ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ*

Հիմնաբառեր. Անի, Անիի հնադարանի դրամագիտական հավաքածուն, Հայաստանի պատմության թանգարան, դրամագետ Խաչատուր Մուշեղյան, դրամներ, հաղորդումներ, դրամների ծագումնաբանական ու ժամանակագրական բացահայտումներ:

Ներածություն

Դրամագետ Խաչատուր Մուշեղյանը Ս. Պետերբուրգի Էրմիտաժի դրամագիտության բաժնում մասնագիտական կրթություն ստանալուց հետո վերադառնում է Հայաստան և, մշտական բնակություն հաստատելով Երևանում, շարունակում է իր գիտական բեղմնավոր ճանապարհը:

Նա Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Էրմիտաժում դրամագիտական կրթություն ստացած առաջին ուսանողն էր Կովկասից: Նրա գիտական ղեկավարն էր դրամագետ-արևելագետ, Էրմիտաժի դրամագիտության բաժնի ղեկավար Ալեքսեյ Բիկովը (տե՛ս. Фенглер и др. 1993, 38), իսկ ատենախոսության ընդդիմախոսն էր՝ Հովսեփ Օրբելին:

Անիի հնադարանի դրամագիտական հավաքածուն

Մինչ Հայաստան վերադառնալը Խ. Մուշեղյանը Հովսեփ Օրբելու անմիջական հանձնարարությամբ ստացավ առաջադրանք՝ հետազոտել Անիի հնադարանի դրամագիտական հավաքածուն:

Աշխատանքի ընթացքում դրամագետը մտովի անցավ ոչ միայն միջնադարյան Անիի աշխույժ, կենսունակ առևտրական շուկաների ճանապարհներով, այլև կարողացավ բացահայտել տարբեր դրամահատարաններում, տարբեր տիրակալների կողմից հատված դրամները:

Տասնամյակներ էին անցել այն օրվանից, երբ հնագիտական արշավախմբի մասնակիցները հեռացել էին Անիից: Աշխարհբեկ Քալանթարի շնորհիվ Անիի դրամագիտական հավաքածուն փրկվել և տեղափոխվել էր Երևան ու տեղ գտել Հայաստանի պատմության թանգարանի հնագիտության բաժնի

* Ստացվել է 20.08.2024, ուղարկվել է գրախոսման 27.08.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

ֆոնդում (Կ. Ղաֆադարյան, Անի, Հայկական սովետական հանրագիտարան 1974, 407-411):

Երկար ժամանակ թանգարանի հավաքածուում տեղ գտած Անի քաղաքի դրամագիտական նյութը շարունակում էր մնալ չուսումնասիրված: Հ. Օրբելին հրաշալի գիտակցում էր, որ անհնար է ստեղծել որևէ երկրի լիարժեք պատմություն՝ առանց դրամագիտական տվյալների օգտագործման: Ի տարբերություն եվրոպական երկրների, որտեղ դրամագիտությունը զարգացման երկար ճանապարհ էր անցել, Հայաստանում այն սկզբնավորվեց Խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ երկիրն ունեցավ իր պատմության թանգարանը և Գիտությունների ակադեմիան:

Ավելին, Անիի դրամագիտական հավաքածուն դարձավ լուրջ դրդապատճառ Հ. Օրբելու համար, որպեսզի Խորհրդային Հայաստանում բարձրաձայնի նոր գիտական բնագավառի՝ դրամագիտության կարևորության, ինչպես նաև դրամագետ-մասնագետի հրատապ պահանջի անհրաժեշտության մասին: Եվ չնայած այդ ժամանակ թանգարանի դրամագիտական բաժինը Ա. Շահնազարյանի գլխավորությամբ իր արժանավոր տեղն ուներ, Հովսեփ Օրբելու անմիջական նախաձեռնությամբ ու կարգադրությամբ Հայաստանի Գիտությունների Ակադեմիայում դրամագիտությունը ի դեմս՝ Խաչատուր Մուշեղյանի դրվեց գիտական ուղղության վրա ու իր մեծ ներդրումն ունեցավ նորաստեղծ այդ ոլորտի զարգացման գործում:

Անիի դրամագիտական նյութի դասակարգումը

Մուշեղյանի հետազոտություններում առանձնահատուկ և բացառիկ տեղ է գրավում Անիի դրամագիտական նյութը: Նրա կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում Անիի հնադարանի դրամագիտական հավաքածուն դրամների ծագումնաբանության և ժամանակագրության հարցում ստացավ հիմնավոր արդյունք: Ուսումնասիրությունը մեծ արձագանք գտավ ինչպես Եվրոպայում, այնպես էլ ԱՄՆ-ում, աշխատանքը թարգմանվեց ու տպագրվեց հեղինակավոր ու ճանաչված այնպիսի պարբերականներում, ինչպիսին էր՝ Revue des etudes Armeniennes հանդեսը (1984 Փարիզ) (Mus'elyan 1984, 461-569): Այնուհետև այն տպագրվեց «Հայ Դրամագիտական Հանդես»-ում (Մուշեղյան 1989, 113-126), իսկ դրամագետի մահից հետո նրա անտիպ ձեռագրերի հիման վրա իրականացավ գրքի հրատարակումը (Mousheghian et al 2000), որի խմբագրական աշխատանքներին համատեղ մասնակցեցին ֆրանսիացի դրամագետներ Ս. Բրեսը, ժ. Դեպերոն, ֆ. Գուրնեթը, իսկ Հայաստանից՝ հեղինակի դուստրը՝ Անահիտ Մուշեղյանը:

2001 թվականին, Փարիզի «Pavillon des Arts» տաղավարում բացվեց մեծ ցուցահանդես՝ նվիրված Հայաստանի միջնադարյան Անի քաղաքին: Ցուցադրությունը եվրոպացի այցելուներին ներկայացավ իր հնագիտական ժառանգության ողջ նյութով: Անի քաղաքի պատմությունը միշտ էլ հուզել է ու շարունակում է մնալ արդիական ոչ միայն հայերի, այլև օտարների համար, ովքեր հետաքրքրված են Անիի հարուստ պատմամշակութային անցյալով և ժառանգությամբ: Հենց այդ ցուցահանդեսում ներկայացվեց նաև Խ. Մուշեղյանի կատարած ուսումնասիրությունը

գրքի տեսքով, որը խորագրված էր՝ “History and coin finds in Armenia: Coins from Ani, capital of Armenia (4th c. BC – 19th c. AD):

Կատարված արժեքավոր աշխատանքն աչքի էր ընկնում առանձնահատուկ մոտեցմամբ ու շուքով, դրամագիտական հետազոտությունների պահանջներին համապատասխան գրաֆիկներով, աղյուսակներով, ինչպես նաև մայրաքաղաքի ճարտարապետական կոթողների լուսանկարներով և քարտեզներով: Փարիզի ցուցահանդեսում գիրքը գտավ իր արժանավոր տեղն ու ստացավ մեծ արձագանք:

Ինչո՞վ է արժեքավոր դրամագետի ուսումնասիրությունը

Խ. Մուշեղյանն իր հետազոտության մեջ նախ խորին երախտագիտությամբ հիշատակում է այն գիտնականների անունները, ովքեր Անիի դրամագիտական հավաքածուի հայտնաբերման և ուսումնասիրման աշխատանքում կարևոր գիտական ավանդ էին ներդրել: Նրանցից առաջինը Ն. Մառն էր, որը տեղեկացնում էր, որ գտածոների մեծ մասը պղնձե դրամներ էին և հավաքածուի միայն փոքր մասն էին կազմում արծաթե դրամները (Мар 1908 27-29): Մյուս գիտնականը Հ. Օրբելին էր, ով տեղեկացնում էր, որ Անիիում գտնված դրամների կազմում տեղ էին գտել բյուզանդական պղնձե, մասամբ՝ մահմեդական, ինչպես նաև վրացական դրամներ (Орбели 1963, 10):

Դրամագետը, ունենալով այս սահմանափակ տեղեկատվությունը Անիի դրամական հավաքածուի վերաբերյալ, մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով անցնում է գործի: Նա իր ուսումնասիրության ընթացքում հատ-հատ անդրադարձ է կատարում յուրաքանչյուր դրամին՝ հետազոտության մեջ ընդգրկելով հին և միջնադարյան դրամների վերաբերյալ բոլոր օրինակները:

Արդյունքում, Խ. Մուշեղյանն առաջին անգամ ներկայացնում է ՀՊԹ–ում պահվող Անիի դրամագիտական հավաքածուի ամբողջական ցուցակը՝ համաձայն դրամների ծագման ժամանակագրության և դինաստիական տվյալների (Mus’elyan 1984, 461-469):

Ըստ նրա հաշվարկի՝ Անի քաղաքի տարածքից հայտնաբերվել էր 1794 մետաղյա դրամ, որից 43-ը՝ արծաթե, իսկ 1751-ը՝ պղնձե: Համաձայն դրամագետի հետազոտության (Mus’elyan 1984, 461-469; Մուշեղյան 1989, 117)՝ Անիին բնորոշ են եղել.

Ա. Բյուզանդական կայսրության շրջանի 10-13-րդ դդ. դրամներ:

Բ. Թուրք-սելջուկյան տիրապետության շրջանի 11–13-րդ դդ. դրամներ:

Գ. Մոնղոլական տիրապետության շրջանի 13-15-րդ դդ. դրամներ:

10-11-րդ դդ. բյուզանդական պղնձե դրամներն Անիում ունեին լայն տարածում: Հատկապես գործածական են եղել՝ Հովհաննես Չմշկիկ, Վասիլ 2-րդ և Կոստանդին 8-րդ կայսրերի համատեղ գահակալության, Միքայել 4-րդ, Թեոդորա կայսրուհու, Կոստանդին 10-րդ Դուկասի, ինչպես նաև կայսրուհի Եվդոկիայի ֆոլիսները (Մուշեղյան 1989, 113-126):

Ըստ Խ. Մուշեղյանի՝ Անիում, մինչև մոնղոլական տիրապետության հաստատումը, տարածված են եղել նաև վրաց Բագրատունյաց թագավորության դրամները: Դրանք հիմնականում Թամարա և Ռուսուդան թագուհիների վրացերեն համառոտ և արաբերեն ընդարձակ գրություններով հատված պղնձե դրամներ էին:

Խ. Մուշեղյանի դիտարկմամբ Անիում՝ մոնղոլական ավելի քան 77 տարվա տիրապետության ընթացքում, մոնղոլ տիրակալները տարածել են իրենց անուններով հատած արծաթե դրամներ: Դրամներ են թողարկել ոչ միայն Հուլաղույանները, այլև Ջալաիրյան խաները:

Արծաթե դրամներից բացի մոնղոլական շրջանում երբեմն թողարկվել են նաև ոսկե, պղնձե դրամներ: Համաձայն դրամագետի՝ մեզ են հասել Անիում հատված Աբու-Սայիդ խանի 1317-1318 ոսկե դրամներից, ինչպես նաև վերջին Հուլաղույաններից Սուլեյման խանի անունով Անիում հատված պղնձե դրամներից առանձին նմուշներ:

Համաձայն Հ. Օրբելու՝ Անի քաղաքի վերջին դրամագիտական վկայությունը վերաբերում է 15-րդ դարում հատված ոսկե դրամին (Орбели 1963, 10): Այն թվագրվում է 1407-1420 թթ. և կրում է Կարա-Կոյունլու Աբու-Նասր Կարա Յուսուֆ Նույան իբն Մուհամմեդի և նրա գահաժառանգ՝ Պիր Բուդաղի (1407-1420 թթ.) անունները (Пахомов 1926, том I, N 130,148, том II, N 411 , 467 , том 7, N 1895):

Հետազոտության մեջ Խ. Մուշեղյանը չի սահմանափակվել միայն Անիի հնադարանի դրամներով: Նա քննության է ենթարկել նաև այն բոլոր դրամները, որոնք առնչվել են Բագրատունիների շրջանի քաղաքական և տնտեսական պատմությանը: Այդպիսի դրամներ հայտնաբերվել են արդեն Արթիկի, Հառիճի, Փանիկի, Մեծ Մանթաշի, ինչպես նաև Գյումրիի տարածքներից: Նա օգտվել է դրամագետ Ա. Պախոմովի 1926 թ. Կովկասյան դրամական գտածոների կազմած ցուցակներից (Монетные клады Азербаджана 1926 I, II, III, IV) և այդ բոլորը ներառել աշխատանքի մեջ՝ տալով Անի քաղաքի և նրա շրջակայքում գտնված հին և միջնադարյան դրամական վկայությունների ամբողջական պատկերը:

Աշխատանքն արժեքավոր և հետաքրքիր է նաև նրանով, որ Անիի դրամները համադրվում են Դվին քաղաքից գտնված դրամների հետ, ինչպես նաև հրատարակված և անտիպ մնացած նյութերի հետ, որոնք ընդգրկված են ցուցակում (Մուշեղյան 1989, 115-120): Նա ներկայացնում է Անիում և Դվինում գտնված դրամագիտական նյութի ոչ միայն ընդհանրությունները, այլև տարբերությունները, որոնք բնորոշ են եղել նրանցից յուրաքանչյուրի դրամական շրջանառության ներքին ոլորտին: Դրա մեջ ընդգրկված էին հին և միջնադարյան դրամների վերաբերյալ բոլոր այն օրինակները, որոնք գտնվել էին միջնադարյան Անիում և նրա շրջակայքում:

Այս ծավալուն ու խորքային աշխատանքն այսօր համարվում է գիտական լուրջ ուսումնասիրություն Անիի դրամագիտական նյութի վերաբերյալ, որ դեռևս ոչ մեկի կողմից այսպիսի ամփոփ ցուցակով չէր իրականացվել, որով պարզ կդառնար, թե վերջապես ինչպիսի դրամներ են գտնվել Անի քաղաքի և նրա շրջակայքի տարածքում՝ համադրելով նաև Դվին քաղաքի պեղումներից և շրջակայքից պատահականորեն գտնված դրամագիտական նյութերի հետ:

Ավարտելով աշխատանքը՝ Մուշեղյանը իրականացրեց մեծն հայագետի առաջադրանքն ու ցանկությունը՝ ի կատար անելով իր խոստումը և սերունդներին թողնելով Անիի դրամների ամբողջական և գիտականորեն հիմնավորված ցուցակը: Այսօր Անիի դրամները հնագիտության բաժնի նախկին ֆոնդից տեղափոխվել

են ՀՊԹ-ի դրամագիտության բաժնի ֆոնդ, ուր պահվում են ամենայն փայփայանքով, որպես խոսուն վկայություն երբեմնի միջնադարյան քաղաքի առևտրատնտեսական հարաբերությունների, ինչպես նաև քաղաքական պատմության առհավատչյա:

Եզրակացություն

Առաջին գիտական հետազոտությունը՝ նվիրված միջնադարյան Անիի դրամագիտական հավաքածուին, իրականացրեց Խ. Մուշեղյանը՝ Հ. Օրբելու անմիջական հանձնարարությամբ: Դրամագետը, անդրադառնալով Անիի դրամագիտական ժառանգության քննությանը, կատարեց հավաքածուի ամբողջական դասակարգումը, կազմեց դրամների ցուցակը՝ ներկայացնելով դրամների ծագման ժամանակագրական և դինաստիական տվյալները: Դրա մեջ ընդգրկված էին հին և միջնադարյան դրամների վերաբերյալ բոլոր այն օրինակները, որոնք գտնվել էին միջնադարյան Անիից և նրա շրջակայքից: Աշխատանքն արժևորվում է նաև նրանով, որ Անիի դրամներին զուգահեռ հեղինակը ներկայացնում է միջնադարյան Դվին քաղաքից գտնված դրամները և ինչպես հրատարակված, այնպես էլ անտիպ մնացած դրամագիտական նյութերը, որոնք ընդգրկված են ցուցակում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1974 - Ղաֆադարյան Կ., Անի, *Հայկական սովետական հանրագիտարան*, հ. Ա., Երևան, 1974 , 407-411:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983 - Մուշեղյան Խ., *Դրամական շրջանառությունը Հայաստանում*, Երևան, 1983, 227-233:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1989 - Մուշեղյան Խ., Անի և Դուին քաղաքներում տարածուած դրամները և նրանց համադրութեան տուեալները, *Հայ դրամագիտական հանդես*, Երևան, 1989, № XV, 113-126:

МАР 1908 - Мар Н., *Список предметов древности из VI (1907) археалагической кампани в Ани*, С-П, 1908.

ОРБЕЛИ 1963 - Орбели О., *Избранные труды*, Ереван, 1963, 10.

ПАХОМОВ 1926 - Пахомов А., Монетные клады Азербаджана и Закавказья , *Труды ОИА*, вып.3, Баку, 1926, N 130, 148.

ФЕНГЛЕР и др. - Фенглер Х. ,Гироу Г.,Унгер В., *Словарь Нумизмата*, 2-е изд. дополненное, Москва, 1993, 38.

MOUSHEGHIAN et al. - Mousheghian Kh., Mousheghian A., Bresc C., Depetrot G., Gurnet F., *History and coin finds in Armenia, Coins from Ani, Capital of Armenia (4th c. BC-19th c. AD)*, Moneta, 2001, 1-160.

MUS'ELYAN 1984 - MUS'ELYAN X.A., Bilan compare' des de'couvertes numismatiques a'Ani et Duin, *Revue des e'tudes Arme'niennes*, Paris, 1984, 461-469.

Anahit Moushegyan

anahitm29@gmail.com

NUMISMATIC COLLECTION OF ANI ACCORDING TO THE RESEARCH OF KHACHATUR MUSHEGHYAN

Keywords: Medieval city Ani, Ani coins, Numismatic collection of Ani Museum, History Museum of Armenia, H. Orbeli, Kh. Musheghyan, report about coins, chronology and dynastic data coins of the collection.

Khachatur Musheghyan, instructed personally by Hovsep Orbeli, conducts the first serious scientific research dedicated to Ani's numismatic collection. The numismatist examines each coin one by one, compiling a complete list of coins as well as presenting the chronology and dynastic data of the origin of the coins of the collection, which included all samples of ancient and medieval coins found in and around medieval Ani. The work is particularly valuable in terms of drawing parallels between the medieval Dvin coins and those found in Ani. Owing to the list of Ani coins, it was found out that medieval Ani had a cultural layer of the ancient period as well. Among them the Byzantine overstruck copper coins, Arabic coins, especially the series of coins minted in Ani, are of a particular value.

According to the numismatist's research, Ani was characterized by:

A. Coins of the 10th-13th centuries of the Byzantine Empire

B. Coins of the 11th-13th centuries of the Turkish-Seljuk dynasty

C: Coins of the 13th-15th centuries of the Mongol rule.

Khachatur Musheghyan's research has found a great outlet abroad. In 2001, a large exhibition dedicated to the city of Ani took place in the Paris Pavillion des Arts. The study also found its rightful place in the Paris exhibition and received a tremendous response.

Анаит Мушегян

anahitm29@gmail.com

НУМИЗМАТИЧЕСКАЯ КОЛЛЕКЦИЯ АНИ СОГЛАСНО ИССЛЕДОВАНИЮ ХАЧАТУРА МУШЕГЯНА

Ключевые слова: Музей истории Армении, Ани, востакавед И. Орбели, коллекция Анийских монет, нумизмат Хачатур Мушегян, список монет Ани, хронология и династические данные происхождения монет.

Хачатур Мушегян по личному поручению И. Орбели проводит первые серьезные научные исследования, посвященные нумизматической коллекции Ани. Нумизмат исследует каждую монету по отдельности, составляя полный список монет, а также представляя хронологию и династические данные монет коллекции, в которую вошли все образцы древних и средневековых монет, найденных в Ани и его окрестностях. В ходе изучения монет Ани выяснилось, что в этом городище есть и культурный слой античного периода. Среди монет анийской коллекции особую ценность представляют византийские перечеканенные медные монеты и арабские монеты, отчеканенные в Ани.

Основные группи монет следующие:

А. Монеты X-XIII веков Византийской империи

Б. Монеты XI-XIII веков тюрко-сельджукской династии

С. Монеты XIII-XV веков монгольского владычества.

Работа особенно ценна с точки зрения проведения параллелей между средневековыми монетами Двина и монетами, найденными в Ани. Исследования Х. Мушегяна нашли большой отклик за рубежом. В 2001 году в Парижском Pavillon des Arts состоялась большая выставка, посвящённая городу Ани. Книга нашла свое достойное место на парижской выставке и получила огромный резонанс.